

ԿԱՊԻԿԻ ՄԸ ՀԵՏ

Ֆաշոտա (Ափրիկե) բնակող անգլիացի մը՝ Արթըր Քուբինկ, Շեքսպարա քաղաքին մէկ բնիկէն գետեր եր կապիկ մը ու նուէր բերեր իր ֆրանսացի մէկ բարեկամին, որ իմ ալ ծանօթս է: Կապիկը, որ բռնուած է Ֆաշերի լեռնանտառներուն մէջ, հիմա կը գտնուի փարիզեան արուարձաններէն Պուր-լա-Րէն՝ ֆրանսացի բարեկամիս տանը պարտեզը:

Տեսայ կապիկը, որ Շէքսպարեզ մըն է ու կը կոչուի Մոթօ: Արու է, առողջ եւ չափազանց ճկուն: Աչքերուն մէջէն կ'երեւին իմացականութեան մը կայծերը, որոնցմէ գուրկ են բազմաթիւ մարդիկ:

Ֆրանսացի բարեկամիս թոյլատրութեամբ կարելոր տեսակցութիւն մը ունեցայ այս կապիկին հետ: Ահաւասիկ մեր ասուլիսը.

-Բարեւ, եղբայր Մոթօ...

-Եղբա՛յր... Երբե՛ք: Դուք մարդիկդ, որ գայլ էք իրարու հանդէպ, շատ դիւրութեամբ կը գործածէք հրաշալի բառեր: Օրինակ՝ «եղբայր», «ընկեր», «սիրելի», «յարգելի», «պաշտելի» եւայլն: Եղբայրութիւնը մարդը մարդուն հանդէպ չէ ունեցած, ուր մնաց մարդը կապիկին հանդէպ ունենայ: Նախ բան մը չըսած, սուտ խօսեցար...

-Ինծի համար բոլոր ցեղակիցները իրարու եղբայր են. սերած ենք կապիկէն:

-Մարդը տեր է սուտի մանարանի: Նախ ցեղակիցները իրարու եղբայր չեն ձեր մէջ: Անոնք թշնամի են քաղաքի տարբերութիւնով, գաղափարի տարբերութիւնով, կրօնքի, ազնուութեան տարբերութիւնով: Շատ անգամ միեւնոյն գաղափարի, միեւնոյն կրօնքի, քաղաքի, եւ միևչեւ անգամ, միեւնոյն տունի մարդոց մէջ կարելի է գտնել անթիւ թշնամիներ: Երկրորդ՝ մենք ցեղակիցներ չենք ու երբեք ալ ցեղակիցներ եղած չենք:

-Հապա Տարվի՞նը...

-Տարվինը ուզեց մարդը բարձրացնել: Տարվինը ուզեց մարդուն ազնիւ ծագում մը վերագրել: Տարվինը ուզեց, որ մարդ արարածը կապիկին օրինակելի վարքն ու բարքը ընդօրինակէ: Մարդը, սակայն, անուղղայ է եւ անընդունակ որեւէ ազնիւ բան իւրացնելու: Մարդը